

նորա. եւ անէծք եդ ի մէջ ազգացն իւրեանց ըստ օրինին՝ թէ մի անգամ այլ սորա մանսուպ չտան: Եւ յետ ժամանակաց մի փոքր բանիւ եղեւ զազիէսքէր եւ մեր եկեղեցոյն արարեալ չարութիւն: Եւ այժմ զայսոսիկ գործեաց, եւ ասացին՝ թէ յերէկեան օրս մուշավէրէ առնելով սոցա թէ զթագաւորն սպանցեն եւ զեղբայր նորին դիցեն յաթոռն: Եւ վէզիրն զայս լըւեալ, ոչ գոլով հետ նոցա, ելեալ դիմէ ի թագաւորն եւ զայս պատմէ աճապարելով, եւ թագաւորն ի ներս ձայնեալ եւ սպանեալ: Եւ ասացին թէ քէհեապէկն եւ Հայտարգատէն եւ այլ բազում մեծամեծք հետ մուշավէրէին էին, եւ զնոսա եւս կու սպանանեն ասացին: Ոչ եղև այսպէս, բայց բանս ամենայն ի գլուխն մուֆտուն բարդեցաւ. եւ այս Տեառն շնորհիւ էր եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց որ բարձաւ չարն ի միջոյ, լինելով լուցկի հրոյն յաւիտենի: Եւ Հայտարգատէին տվին զՍիլիստրա, եւ շահաւատէից քէհեան որ կոչէր Ղարա Սլի աղայ Մալաթիացի՝ որդի հայու, եւս զնա սպանեալ եւ զշահաւատէից թայան սպանեալ, եւ այլ եւս Դ ներքինի սեաւ սպանեալ եւ Դ այլ աքսորեալ ի Մսիր: Եւ եդին մուֆտի զՀանիֆի էֆէնտին, որ էր մանզուլ Ուռումէլի զազէսքէրութենէ:

Եւ Դշի օրս (9 Յուլիս) վէզիրն ի ղօլ հեծեալ եւ գնացեալ եւս ի Ղափանն, եւ հացի նարդ տւեալ ի տրամ, քանզի շնորհօք՝ Մարդասիրին ամսուս բազում ցորեան եկն նաւով:

Եշի օր (10 Յուլիս) Խաչատուր վարդապետն ի մեր ժամս եկաւ:

Ուրբաթ (11 Յուլիս): Երեկոյիս մէկ ժամ անցեալ Խաթսուին երոցք եղեւ մօտ ի Սուլէյմանիան. տէֆ-